ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԴԱՍ 5

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Հեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:

ԴԱՍ 5

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ

Տեսանյութն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

Ուշադրությամբ կարդացեք դասի տեսական մասը՝ օգտվելով բառարանից, և այն յուրացնելուց հետո միայն պատասխանեք ինքնաստուգիչ հարցերին:
Այս աշխատանքների համար անհրաժեշտ է մոտ 205 րոպե:

Կոռուպցիոն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունը սահմանված է ինչպես ՀՀ գործող և նոր քրեական օրենսգրքերում, այնպես էլ մի շարք միջազգային իրավական ակտերում, այդ թվում՝ Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի, Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի, Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի ԵԽ կոնվենցիայի և դրա արձանագրության դրույթներում (1):

Հենց վերջիններս էլ սահմանում են այն նվազագույն պահանջները, որոնք վերաբերում են կոռուպցիոն հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկելուն: Ներկայացնելով այն հատկանիշները, որոնց հիման վրա պետությունները պետք է քրեականացնեն կոռուպցիայի դրսևորում հանդիսացող արարքները՝ հիշյալ փաստաթղթերը միանշանակ ամրագրում են այն, որ կոռուպցիոն հանցագործությունները կարող են կատարվել բացառապես դիտավորությամբ: Այդ պահանջն իր ուղղակի ամրագրումն է գտել Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվեն-

ցիայի 28-րդ հոդվածում, որը սահմանում է, որ կոռուպցիոն իրավախախտման տարրեր պետք է դիտարկվեն գիտակցելը, մտադրությունը կամ դիտավորությունը, որոնք պետք է նաև պարզաբանվեն գործի օբյեկտիվ հանգամանքներով: Հետևաբար՝ ՀՀ-ում անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, եթե կոռուպցիոն համարվող հանցավոր արարքը կատարել է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ:

Իհարկե, կոռուպցիոն հանցագործությունների քննության ժամանակ պետք է նկատի ունենալ մեկ հանգամանք ևս. հնարավոր է, որ կոռուպցիոն հանցագործությունը կատարված լինի ոչ թե ՀՀ-ում, այլ դրա սահմաններից դուրս և այդ երկրում դիտավորության և դրա տեսակների բնորոշումները տարբերվեն ՀՀ-ում առկա բնորոշումներից (2): Նման դեպքերում պետք է ուշադրություն դարձնել ՄԱԿ-ի կոնվեցիայով սահմանված տարրերի առկայությանը՝ գիտակցելուն, մտադրությանը:

Նկատի ունենալով այն, որ հաճախ կոռուպցիոն հանցագործությունները կատարվում են ոչ թե մեկ պետության, այլ տարբեր պետությունների տարածքներում, հատկապես՝ շարունակվող հանցանքի պարագայում, կամ էլ՝ մի երկրում կոռուպցիա կատարած անձը թաքնվում է մեկ այլ երկրի տարածքում, կարևոր նշանակություն ունի կոռուպցիոն հանցագործությունների քննության առումով պետության իրավազորության հարցի պարզաբանումը:

Բարձրացված հարցի լուծման նպատակով Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 42-րդ հոդվածը մանրամասն կարգավորում է կոռուպցիոն հանցագործությունների նկատմամբ իրավազորության հարցերը, սահմանելով, որ՝

«1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ իր իրավազորությունը սահմանի իրավախախտումների նկատմամբ, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան, երբ.

ա) իրավախախտումը կատարվել է այդ Մասնակից պետության տարածքում, կամ

բ) իրավախախտումը կատարվել է նավակողի վրա, որն իրավախախտման կատարման պահին կրել է այդ Մասնակից պետության դրոշը, կամ օդանավի վրա, որն այդ պահին գրանցված է եղել այդ Մասնակից պետության օրենսդրությանը համապատասխան:

2. Սույն Կոնվենցիայի 4-րդ հոդվածը պահպանելու պայմանով՝ Մասնակից պետությունը կարող է նաև իր իրավազորությունը սահմանել այդպիսի ցանկացած իրավախախտման նկատմամբ, երբ.

ա) իրավախախտումը կատարվել է այդ Մասնակից պետության քաղաքացու դեմ, կամ

բ) իրավախախտումը կատարվել է այդ Մասնակից պետության քաղաքացու կողմից կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից, որը սովորաբար բնակվում է նրա տարածքում, կամ

գ) իրավախախտումը համարվում է այն իրավախախտումներից մեկը, որն այդպիսին է ճանաչվել սույն Կոնվենցիայի 23-րդ հոդվածի 1-ին «բ» ii[1] կետին համապատասխան և կատարվել է նրա տարածքից դուրս՝ որևէ իրավախախտում կատարելու համար, որն այդպիսին է ճանաչվել սույն Կոնվենցիայի 23-րդ հոդվածի 1-ին «ա» i կամ ii կամ «բ» i կետին համապատասխան, կամ

դ) իրավախախտումը կատարվել է այդ Մասնակից պետության դեմ:

3. Սույն Կոնվենցիայի 44-րդ հոդվածի[2] նպատակների համար յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ իր իրավազորությունը սահմանի իրավախախտումների նկատմամբ, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան, երբ անձը, որը կասկածվում է հանցագործություն կատարելու մեջ, գտնվում է իր տարածքում, և ինքն այդ անձին չի հանձնում միայն այն հիմքով, որ նա հանդիսանում է իր քաղաքացիներից մեկը:

4. Յուրաքանչյուր Մասնակից պետություն կարող է նաև ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են պահանջվել նրա համար, որ իր իրավազորությունը սահմանի այն իրավախախտումների նկատմամբ, որոնք այդպիսին են ճանաչվել

. . . . . .

1. Նշված հոդվածը պատասխանատվություն է սահմանում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար, իսկ հոդվածի նշված դրույթը՝ իրավախախտումներից փողերի լվացում հանդիսացող արարքներից որևէ մեկը կատարելու նպատակով դրան մասնակցելու, առնչության կամ հանցակցության մեջ մտնելու համար, դրա կատարման փորձի, ինչպես նաև օժանդակելու, դրդելու, աջակցելու կամ դրա կատարման ժամանակ խորհուրդներ տալու:

2. Նշված հոդվածը վերաբերում է հանձնմանը:

սույն Կոնվենցիային համապատասխան, երբ հանցագործության կատարման մեջ կասկածվող անձը գտնվում է իր տարածքում, և ինքը չի հանձնում նրան:

5. Եթե սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան իր իրավազորությունն իրականացնող Մասնակից պետությունը ծանուցագիր է ստանում կամ որևէ այլ եղանակով տեղեկանում է այն մասին, որ ցանկացած այլ Մասնակից պետություն քննություն, քրեական հետապնդում կամ դատաքննություն են իրականացնում այդ նույն արարքի կապակցությամբ, ապա այդ Մասնակից պետությունների իրավասու մարմինները, անհրաժեշտության դեպքերում, միմյանց հետ խորհրդատվություններ են անցկացնում իրենց գործողությունները համակարգելու նպատակով:

6. Առանց վնասելու ընդհանուր միջազգային իրավունքի նորմերը՝ սույն Կոնվենցիան չպետք է բացառի ցանկացած քրեական իրավազորություն իրականացնելը, որը Մասնակից պետության կողմից սահմանվել է իր ներքին օրենսդրությանը համապատասխան:»

Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված իրավազորության հարցերին անդրադառնալիս, պետք է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ սահմանվում են քրեական օրենքի գործողության 4 հիմնարար սկզբունքներ՝ տարածքային, քաղաքացիության, ունիվերսալ և ռեալ:

Ուշադրություն դարձրեք քրեական օրենքի գործողության այս 4 հիմնարար սկզբունքներին:

Այն դեպքերում, երբ կոռուպցիոն հանցանքը սկսվել, շարունակվել և ավարտվել է ՀՀ տարածքում, օրենքի կիրառման տեսանկյունից խնդիրներ չեն ծագում, քանի որ լիովին կիրառելի է ՀՀ քրեական օրենսդրությունը: Դա տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ հանցանքը կատարվել է ՀՀ տարբերանշանը կրող օդանավի կամ ՀՀ դրոշի տակ գտնվող նավի վրա՝ միջազգային օրենսդրությամբ սահմանված բացառությունները հաշվի առնելով: Որոշակի խնդիրներ ծագում են այն դեպքերում, երբ հանցանքը

ՀՀ-ում կատարվում է միջազգային կազմակերպությունների կամ դիվանագիտական/հյուպատոսական անձեռնմխելիությունից օգտվող անձանց կողմից, քանի որ նման դեպքերում արդեն հարցը լուծվում է միջազգային իրավունքի դրույթներին համապատասխան՝ ղեկավարվելով Վիեննայի կոնվենցիայի պահանջներով (3):

Համեմատեք ներկայացված պահանջները պրակտիկայում կիրառվող հանգամանքների հետ:

Եթե հանցանքը կատարվել է ՀՀ տարածքից դուրս՝ ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի կողմից, ապա կիրառելի է ՀՀ քրեական օրենսդրությունը՝ քաղաքացիության սկզբունքի ուժով: Մասնավորապես, այդ դրույթի պահանջն այն է, որ՝

- հանցանքը կատարված լինի ՀՀ տարածքից դուրս,
- հանցանքը կատարվի ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի կողմից,
- այդ անձը հանցանքի կատարման երկրում դատապարտված չլինի,
- հայտնված լինի ՀՀ-ում,
- առկա լինեն նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերն ու պայմանները, մասնավորապես՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած չլինի,
- անձի կատարած արարքը հանցանք համարվի թե՛ հանցանքի կատարման վայրի, թե՛ ՀՀ քրեական օրենսգրքերով:

Այդ սկզբունքի կիրառման առումով առանձին կարևորություն ունի այն, որ անձի դրսևորած կոռուպցիոն վարքագիծը հանցավոր համարվի թե՛

ՀՀ օրենսդրությամբ, թե՛ այն վայրի, որտեղ կատարվել է: Այնուհանդերձ, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև միջազգային փաստաթղթերի պահանջները կատարելու համար, ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 15-ը սահմանում է, որ կոռուպցիոն հանցագործությունների առանձին դրսևորումների, օրինակ՝ կաշառակերության, իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու թե՛ ակտիվ, թե՛ պասիվ դրսևորումների, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու, առևտրային կաշառքի պարագայում, ՀՀ-ից դուրս նշված հանցանքները կատարած ՀՀ քաղաքացին կամ ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության՝ անկախ հանցանքի կատարման պետությունում այդ արարքների քրեականացված լինելու հանգամանքի:

Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ իրավազորությանը վերաբերող դրույթի պահանջներին համահունչ՝ ՀՀ-ում քրեական օրենքի ունիվերսալ սկզբունքի համաձայն, պատասխանատվություն է սահմանվում ՀՀ տարածքից դուրս կոռուպցիան հանցանք կատարած օտարերկրացիների և ՀՀ-ում մշտապես չբնակվող քաղաքացիություն չունեցող անձանց համար, եթե վերջիններս հայտնվել են ՀՀ-ում, հանցանքի կատարման պետությունում չեն դատապարտվել, չեն անցել անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները և առկա են ՀՀ միջազգային պարտավորությունները՝ այդ հանցանքների դեմ պայքար իրականացնելու առումով: Կոռուպցիոն հանցագործությունների պարագայում ՀՀ-ն ստանձնել է նման պարտավորություններ, հետևաբար ունիվերսալ սկզբունքը կիրառելի է ՀՀ-ից դուրս կոռուպցիոն հանցանք կատարած օտարերկրացիների և ՀՀ-ում մշտապես չբնակվող քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ:

ՄԱԿ-ի կոնվենցիայի 41-րդ հոդվածից որոշակի շեղում ՀՀ քրեական օրենսդրությամբ ներկայումս առկա է ռեալ սկզբունքի առումով, քանի որ վերջինս սահմանում է, որ պետությունը պետք է իրավազորություն ունենա այն կոռուպցիոն հանցանքների քննության առումով, որոնք ուղղված են իր կամ իր պետության քաղաքացիների դեմ: ՀՀ գործող քրեական օրենսգիրքը ներկայումս նման կանոնակարգում նախատեսել է միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարման

պարագայում, մինչդեռ ՄԱԿ-ի կոնվենցիան սահմանում է, որ հանցանքի ծանրության աստիճանը դերակատարություն չպետք է ունենա:

Այս առումով առավել առաջադիմական է 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգիրքը, որի 12-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է հետևյալը.

Ծանոթացեք բնորոշմանը:

«Քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքն ուղղված է ՀՀ շահերի, ՀՀ քաղաքացու, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձի, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձի կամ իրավաբանական անձի իրավունքների և ազատությունների դեմ»: Ներկայացված ձևակերպմամբ ՀՀ իրավասությունը հնարավոր կլինի տարածել ՀՀ քաղաքացիների կամ ՀՀ-ում մշտապես բնակվող մի շարք կատեգորիայի անձանց նկատմամբ կատարվող կոռուպցիոն հանցանքների վրա:

Տեղյա՞կ եք արդյոք, թե ինչ տարբերություն կա ՀՀ գործող և նոր քրեական օրենսգրքերի միջև՝ կոռուպցիոն հանցագործության, դրա նախապատրաստության և հանցափորձի համար պատասխանատվություն սահմանելու տեսանկյունից:

Կոռուպցիոն հանցագործությունների պարագայում՝ քրեական պատասխանատվության ենթարկելու առումով առանցքային նշանակություն ունեցող հարցերից հաջորդը վերաբերում է նրան, որ քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի ինչպես հանցանք կատարողը, այնպես էլ նրան հանցակցող անձը, ընդ որում՝ պատասխանատվություն պետք է սահմանվի ինչպես ավարտված կոռուպցիոն հանցագործության, այնպես էլ դրա նախապատրաստության և հանցափորձի հա-

մար: Այս պահանջն ուղղակի ամրագրում է գտել Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 27-րդ հոդվածում, և հանցակցության ինստիտուտի առումով ՀՀ քրեական օրենսդրությունը՝ թե՛ գործողը, թե՛ 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունվածը, համապատասխանում են ներկայացված պահանջին, սակայն նախապատրաստության փուլում գտնվող արարքների համար քրեական պատասխանատվության սահմանման առումով ՀՀ գործող քրեական օրենսգիրքը որոշակի բացեր ունի. ՀՀ գործող քրեական օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասում ներկայացված ձևակերպման համաձայն՝ չավարտված հանցագործություն են դիտարկվում հանցափորձը և ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստությունը, ինչից հետևում է, որ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների նախապատրաստությունը ՀՀ-ում քրեականացված չէ:

Ներկայացված բացն իր կարգավորումն է գտել 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում, որը պատասխանատվություն է սահմանել հանցագործությունների դասակարգման բոլոր խմբերում ընդգրկված հանցանքների նախապատրաստության համար:

Կոռուպցիոն հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկելու հաջորդ նախապայմանը վերաբերում է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներին:

Մինչ քրեական պատասխանատվության հաջորդ նախապայմանին անցնելը վերհիշեք նախորդ նախապայմանը:

Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 29-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր Մասնակից պետություն համապատասխան դեպքերում, իր ներքին օրենսդրության համաձայն, սահմանում է վաղեմության երկար ժամկետ՝ այն իրավախախտումների առնչությամբ վարույթ հարուցելու համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիայի համաձայն, և սահմանում է վաղեմության ավելի երկար ժամկետ կամ վաղեմության ժամկե-

տի կասեցման հնարավորություն այն դեպքերում, երբ հանցագործության կատարման մեջ կասկածվողը խուսափում է արդարադատությունից»:

Վաղեմության ժամկետներն ամրագրված են ՀՀ գործող քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածում, որի համաձայն՝ անձին հնարավոր չէ ենթարկել քրեական պատասխանատվության, եթե ոչ մեծ ծանրության հանցանքի օրվանից անցել է 2, միջին ծանրության հանցանքի պարագայում՝ 5, ծանրի դեպքում՝ 10 և առանձնապես ծանրի դեպքում՝ 15 տարի: Ընդ որում, օրենսդիրը նախատեսել է նաև վաղեմության ժամկետի թե՛ կասեցման, թե՛ ընդհատման հնարավորություն՝ սահմանելով, որ վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև վաղեմության ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից: Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դատից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից: Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասը տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից՝ քսան տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ:

Վաղեմության ժամկետների՝ ՀՀ գործող քրեական օրենսդրությամբ նախատեսված կանոնակարգման պարագայում առկա են որոշակի խնդիրներ՝ կապված ՄԱԿ-ի կոնվենցիայի 29-րդ հոդվածի պահանջի կատարման հետ. մասնավորապես՝ դժվար թե կարելի է ոչ մեծ ծանրության հանցանքների համար սահմանված 2 տարի ժամկետով վաղեմության տիրույթը դիտարկել որպես երկար ժամկետ այն պարագայում, երբ կատարված արարքի համար պատասխանատվություն սահմանող հոդվածի սանկցիայում պատժաժամկետը 2 տարի է: Միևնույն ժամանակ, թեև օրենսդիրը նախատեսում է վաղեմության ժամկետի կասեցման հնարավորություն, սակայն դա կապում է միայն քննությունից խուսափելու կամ թաքնվելու հետ, մինչդեռ գործնականում կոռուպցիոն հանցագործություններին ժամանակին արձագանքելուն խոչընդոտող գործոններից է

անձեռնմխելիության իրավունքը, որը, օրինակ վերապահվում է ԱԺ պատգամավորներին՝ իրենց գործունեության իրականացման ժամանակահատվածում:

Այս առումով առավել առաջադիմական է ՀՀ նոր քրեական օրենսգիրքը, որը սահմանում է, որ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1. 5 տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում,
2. 10 տարի՝ միջին ծանրության հանցանքի դեպքում,
3. 15 տարի՝ ծանր հանցանքի դեպքում,
4. 20 տարի՝ առանձնապես ծանր հանցանքի դեպքում:

Ծանոթացեք օրենսդրական փոփոխություններին:

Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից մինչև անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելը:

Տևող հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելուն հաջորդող օրվանից, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ վերջին արարքը կատարելու հաջորդող օրվանից: Չավարտված հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցագործության նախապատրաստություն կամ հանցափորձ համարվող արարքը դադարելու պահից:

Հանցակցությամբ հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե կատարողի կողմից հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել են վերը քննարկված վաղեմության ժամկետները: Այս առումով ուշագրավ է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետի հաշվարկը կապում է կատարողի վարքագծի հետ:

Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է նոր հանցանք: Այդ դեպքում յուրաքանչյուր հան-

ցագործության համար վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքն ավարտվելու պահից: Ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի, որը վաղեմության ժամկետի ընդհատման համար պահանջում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարում, նոր քրեական օրենսգիրքը վաղեմության ժամկետի ընդհատում է դիտարկում ցանկացած նոր հանցանքի կատարումը:

Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից: Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքն ավարտվելու օրվանից անցել է 15 տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտվելու օրվանից՝ 25 տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ:

Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև ՀՀ կողմից վավերացած միջազգային պայմանագրերով նախատեսված առանձին հանցակազմերի պարագայում, օրինակ՝ խոշտանգման:

Ուշադրություն դարձրեք կոռուպցիոն հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկելու հաջորդ խնդրին:

Կոռուպցիոն հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկելու հաջորդ խնդիրը վերաբերում է գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելուն: ՀՀ գործող քրեական օրենսգիրքը նախատեսում է գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելու դեպքում, ընդ որում՝ որևէ արգելք նախատեսված չէ կոռուպցիոն հանցագործությունների համար:

Միաժամանակ, օրենսդիրը նախատեսում է նաև կոռուպցիոն բնույթի առանձին, այդ թվում՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների պարագա-

յում գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն՝ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում:

Օրինակ՝ նման խրախուսական նորմ ներկայումս նախատեսված է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասում, որը սահմանում է, որ կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

Կոռուպցիոն հանցագործությունների պարագայում գործուն զղջալու դեպքում քրեական պատասխանատվությունն ավտոմատ բացառելու նման իմպերատիվ դրույթի առկայությունը միջազգային կառույցների կողմից, իհարկե, դիտարկվում է ոչ ցանկալի: Մասնավորապես՝ դրան անդրադարձել է ԳՐԵԿՈ/GRECO-ն՝ ՀՀ-ի գնահատման իր զեկույցում (4), նշելով, որ կաշառք տալու և հետագայում այդ մասին իրավասու մարմիններին հաղորդելու պարագայում կաշառք տվողի քրեական պատասխանատվության բացառումը պետք է տեղ գտնի ոչ թե ավտոմատ և պարտադիր կերպով, այլ անհատական մոտեցման հիման վրա՝ հաշվի առնելով կաշառք տալու բոլոր հանգամանքները, ինչպես նաև հանցավորի անձնավորությունը և նրա վարքագիծը հանցանքներից հետո:

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում կաշառակերությանը վերաբերող հոդվածներում խրախուսական նորմերը վերացվել են և գործուն զղջալու դեպքում հանցավորը, օրինակ՝ կաշառք տվողը, ավտոմատ չի ազատվում քրեական պատասխանատվությունից, այլ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթների ուժով, անհատական մոտեցում դրսևորելով, հնարավոր է լինում անձին կամ ազատել քրեական պատասխանատվությունից, կամ մեղմացնել նրա պատիժը:

Ուշադրություն դարձրեք օրենսդրական փոփոխությանը:

ՀՂՈՒՄՆԵՐ

Հղումները նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութերի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար

1 Կոռուպցիայի մասին Քրեական իրավունքի կոնվենցիա, ԵԽ, 27.01.1999,
http://www.irtek.am/views/act.aspx?aid=40642
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.),
Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի ԵԽ կոնվենցիա, 04.11.1999,
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24512
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.),
Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 31.10.2003,
https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

2 Малиновский А. Сравнительное правоведение в сфере уголовного права, М., 2002, էջ 51,
http://lawlibrary.ru/izdanie43515.html
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

3 Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիա, 18.04.1961,
http://www.irtek.am/views/act.aspx?aid=37357
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.),
Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիա, 24.04.1963,
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=3253
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

4 GRECO Third Evaluation Round Compliance Report on Armenia, https://www.legislationline.org/download/id/5213/file/GrecoRC3201221_Armenia_EN.pdf *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

ԲԱՌԱՐԱՆ

Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 10 րոպե:

ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ — Կոռուպցիոն վարքագիծ է, որը դրսևորվում է կաշառք տալով:

ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՍԻՎ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ — Կոռուպցիոն վարքագիծ է, որը դրսևորվում է կաշառք ստանալով:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ — Մեկ միասնական դիտավորությամբ, միևնույն օբյեկտի դեմ ուղղված նույնական արարքներով հանցանքի կատարումն է: